



## Մամուլի հաղորդագրություն

2011թ. սեպտեմբերի 21-ին Հայաստանի Հանրապետությունը կնշի իր անկախության 20-րդ տարեդարձը: 20-ամյա անկախությունը, ի թիվս այլոց, իրենց աշխատանքով ամրապնդել ու կերտել են նաև գիտության ու մշակույթի մարդիկ՝ ապահովելով հազարամյակների խորքից եկող հայկական մշակույթի զարգացման շարունակականությունը: Այդ ճանապարհը հիշարժան քայլերով է անցել նաև Հայաստանի հնագիտությունը՝ վստահ, որ մեր մշակութային և սոցիալական արմատների ճանաչումը և հնագիտական ժառանգության պահպանությունը ևս հիմնարար կարևորություն ունի:

2004թ. Հայաստանը վավերացրեց «Հնագիտական ժառանգության պահպանության եվրոպական կոնվենցիան»՝ հաստատելով Հայաստանի պատկանելությունը եվրոպական մշակութային ընտանիքին և արդիականացնելով իր մոտեցումները հնագիտության և այդ ժառանգության կառավարման դաշտում: Նախնական հնագիտական դիագնոստիկան զարգացման և կառուցապատման ծրագրերում ինտեգրելու հաջողված օրինակ էր Հոստուն միջնադարյան գյուղատեղիի պեղումները, որի նախաձեռնողն ու իրականացնողը «Էրեբունի» պատմահնագիտական արգելոց-թանգարանի արշավախումբն էր: Եթե Արենիի քարանձավից հայտնաբերված ամենահին կոշիկի լուրը հաշվված վայրկյանների ընթացում թևածեց աշխարհով և կամ Շենգավիթում ու Էրեբունիում մինչ օրս շարունակվող պեղումները չեն դադարում զարմացնել հայ և օտարերկրյա հնագետներին, ապա Հոստուն գյուղատեղիից հայտնաբերված ժառանգությունն ունի երկրագիտական նշանակություն և օգնում է լրացնել զարգացած և ուշ միջնադարում արհեստագործության և ավանդական հմտությունների մասին մեր գիտելիքները, ինչպես նաև ամբողջացնել պատմության այն դրվագները, որոնց վերաբերյալ գրավոր աղբյուրների վկայությունները բավարար չեն:

Հնագիտությունը մշակութային ժառանգության հենասյուներից է, որի շնորհիվ ամբողջացվում է մարդկային հասարակության պատմությունը՝ անհիշելի ժամանակներից: Բազմաթիվ են նաև այդ ժառանգությանը սպառնացող վտանգները՝ գյուղատնտեսություն, տուրիզմ, կառուցապատում, տնտեսական ներդրումներ, որոնց իրականացումից առաջ անհրաժեշտ է կանխատեսել և հնարավոր ավերումից փրկել հնագիտական արժեքները: 2005թ. Վայոց ձորի մարզի Եղեգիս գյուղից 2 կմ արևմուտք նախատեսվող ջրագծի կառուցման աշխատանքներին, որի պատվիրատուն «Արփա-Սևան» ՓԲԸ-ն էր, նախորդեցին տարածքի հնագիտական հետազոտություններ՝ ի հայտ բերելով Հոստուն միջնադարյան գյուղի սոցիալ-տնտեսական կյանքի վերաբերյալ նյութական մնացորդներ:

Հոստունի՝ պատմական Ոստինք գյուղի և համանուն վանքի մասին հայտնում են մատենագիտական աղբյուրները՝ տեղեկացնելով, որ Վարդանանց պատերազմից հետո Գյուտ կաթողիկոսի հրամանով զոհերի հիշատակին կառուցված եկեղեցիներից է նաև Ոստինք և Արտաբույնք գյուղերի ջրկիցի հատվածում կառուցված եկեղեցին: Հոստունցիներին մեր պատմիչները հիշատակում են որպես «ընտիր գորականներ», իսկ Ոստինքի սեպուհներն աչքի են ընկել իրենց քաջությամբ ու հայրենասիրությամբ՝ արցախահայերի ջոկատի հետ միասին մասնակցելով Վարդանանց պատերազմից հետո պարսիկների դեմ շարունակվող Անգեղձորի ճակատամարտին:

2005-2006թթ. հնագիտական պեղումների արդյունքում բացված Հոստունի հնագիտական ժառանգությունը, հիմնականում կենցաղային խեցեղեն և մետաղական իրեր, մինչ Եղեգնաձորի երկրագիտական թանգարանին մշտական պահպանության հանձնվելը կցուցադրվի «Էրեբունի» պատմահնագիտական արգելոց-թանգարանի ժամանակավոր ցուցասրահում: Այցելուին կներկայացվեն 235 հնագիտական առարկաներ՝ դաջազարդ կարասների բեկորներ, ջրատար խողովակներ, աշխատանքի մետաղական գործիքներ, ջնարակած խեցեղենի նմուշներ, թասեր, քրեղաններ, ապակե ապարանջաններ, որոնք թվագրվում են 12-19 դարերով: Յուրահանդեսը նվիրվում է ՀՀ անկախության 20-րդ տարեդարձին և կրում է «Հոստուն. անկախության տարիների հնագիտական բացահայտումներից» խորագիրը: Այն կգործի 2011թ. սեպտեմբերի 17-հոկտեմբերի 17-ը, բացումը՝ սեպտեմբերի 17-ին, ժամը 11:00-ին:

Նույն օրը արգելոց-թանգարանում կնշանավորվի նաև կրթամշակութային նոր նախաձեռնության՝ «Պատանի հնագետի դպրոց»-ի պեղումների հրապարակի բացմամբ: Նախագծի նպատակն է կարևորել երիտասարդ սերնդի դերը պատմամշակութային ժառանգության պահպանության

գործում և խրախուսել հնագետի մասնագիտության և հնագիտական պեղումների մասին նախնական գիտելիքների տարածումը միջին ու բարձր դպրոցահասակ և ուսանող երիտասարդության շրջանում:

Պատանի հնագետների համար նախատեսված պեղավայրը բաղկացած է 3 սենյակներից՝ վերստեղծված Էրեբունի ամրոցի միջնաբերդի կարասային, տնտեսական սենյակների և Խալդ աստծո տաճարից հարավ պեղումներով բացված հատվածի նույնական պատկերով: Այս մոտեցումը պատանի հնագետներին թույլ կտա զգալ պատմամշակութային վայրի ոգին՝ ինչը ևս էական է ապագա մասնագետներ պատրաստելու ճանապարհին: Ծրագրի գլխավոր նպատակն է աջակցել հնագիտությամբ հետաքրքրվող երիտասարդներին մասնագիտության ընտրության հարցում:

Դպրոցականների համար հարմարեցված «Հնագիտության ներածություն» դասընթացի և գործնական պեղումների մեկնարկը նախատեսվում է 2012թ. մայիսից: Իսկ մինչ այդ՝ պեղավայրը կծածկվի հողով՝ ինչպես ընդունված է իրական հնավայրերում:

***«Էրեբունի» պատմահնագիտական արգելոց-թանգարան***